ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 12-Ն

<<ՀԵՔԻԱԹ>> ՀՈԱԿ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՑ ՈՐՈՇԵՑ.

1. Հաստատել <<ՀԵՔԻԱԹ>> ՀՈԱԿ նախադպրոցական ուսումնական հաստատության կանոնադրությունը համաձայն համելվածի /կցվում է 7 էջ/:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 19.01.2010 թ. թիվ 1 որոշման 2-րդ կետը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ՁՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՎՍԵՓ ՂԱՁԱՐՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքի ավագանու
13.05.2021 թ. Թիվ 12-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

<<ՀԵՔԻԱԹ>> ՀՈԱԿ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ՀԵՔԻԱԹ» ՀՈԱԿ կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական կրթական առնվազն մեկ տեսակի ծրագիր և նախադպրոցական ծառայություններ:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է՝ Արարատի մարզ, Եղեգնավան համայնք, Ա. Խանջյան փ., 12:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «ՀԵՔԻԱԹ».

2) հայերեն կրճատ՝ «ՀԵՔԻԱԹ»:

6. Հաստատությունը ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

7. Հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները հրապարակվում են հիմնադրի exegnavan.am պաշտոնական կայքում:

8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:

Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով նախատեսված արդյունքների ապահովումն է:

14. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, և հասարակության:

15. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

18. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

19. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

20. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների

առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

21. Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթությունն իրականացվում է պետական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

22. Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

23. Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական-իրավական ձևից, իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

24. Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

25. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

26. Ուսումնական տարին սկսվում է մայիսի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

27. Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև 30-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

28. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

29. Նախադպրոցական ուսումնական հաստատությունը ըստ տեսակի՝ մանկապարտեզ՝ 3-6 տարեկանների ընդգրկմամբ:

30. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը սահմանվում է հիմնադրի որոշմամբ:

31. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

32. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

33. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է համայնքի պոլիկլինիկայի միջոցով: Տնօրինությունը պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

34. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին աշխատանքի ընդունվելիս և հետագայում՝ տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

4. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

35. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

նախադպրոցական տարիքի երեխան.

ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

) տնօրենը, դաստիարակը, դաստիարակի օգնականը:

36. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

37. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

38. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

39. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆառակավորման բնութագրերին:

40. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

41. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

42. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

43. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

44. Հիմնադիրը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

[illegible]ահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման [illegible]ության նկատմամբ.

[illegible]) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է [illegible]ալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

45. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

46. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի ապրիլյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ 6 ամիս ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

47. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

48. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

49. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը, մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան

դաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

50. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի կարգադրության համաձայն, նրա պարտականություններն իրականացնում է դաստիրակը, իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

51. Դաստիարակը՝

1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.

2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.

3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

52. Երաժշտության դաստիարակը՝

1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.

2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

53. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.

2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

54. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

55. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

56. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

57. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

58. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

59. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

60. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

61. Համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

62. Համայնքային հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը դիտանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

64. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

65. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

66. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

67. Համայնքային հաստատության՝ համայնքի բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

68. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

69. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

70. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԵԴԻԳԱՐՈՎԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 13-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Թ-Ի I ԵՌԱՄՍԿԱՅԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1.1 կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել համայնքի 2021 թ-ի I եռամսյակի բյուջեի կատարման հաղորդումը համաձայն թիվ 1 և 2 հավելվածների /կցվում է 2 էջ/:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ՋՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված 1

ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքի ավագանու

13.05.2021 թ. Թիվ 13-Ա որոշման

2021 թ. Առաջին եռամսյակի բյուջեի եկամուտների կատարողականը աճողական տեսքով

/Հավելվածում ցուցանիշները ներկայացված են գույքային հարկերի վճարման գանձապետական ծրագրից/

Եկամտատեսակ	Տարվա ճշտված պլան (հազ.դրամ)	Ամսվա պլանը աճողական տեսքով (հազ.դրամ)	Ամսվա Կատարողականը աճողական տեսքով (հազ.դրամ)	Փաստացին պլանի նկատմամբ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿ /ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ/	63.40	15.00	0.00	0.00%
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿ /ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ/	9236.60	2307.00	0,560	0,0002%
ՀՈՂԻ ՀԱՐԿ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ	0.00	0.00	468,90	0,00%
ՀՈՂԻ ՀԱՐԿ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑԻՑ	0.00	0.00	0,500	0.00%
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՓՈԽԱՌՐԱՄԻՋՈՑՆԵՐԻՑ	4000.00	999.00	889,97	89,08%
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹ. ՖԻԶ ԱՆՁԱՆՑԻՑ	0.00	0.00	20,52	0,00%
ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	0.00	0.00	3,00	0,00%
ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ /ԿԱՄ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏ. ՀԱՄԱՐ	208.00	51.00	93,80	183,92%
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	33000.00	33000.0	0.00	0.00%
ՊԵՏ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆ ՀԱՄԱՀԱՐԹ ՄԿՋԲՈՒՆՔՈՎ ԴՈՏԱՑԻԱՆԵՐ	35684.70	8946.2	8946.2	100.00%
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄԵՆՐ /ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ/	72871.70	18216.00	72871.70	400.04%
ՀԱՄ. ՄԵՓ. ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ	4500.00	1125.00	1292,97	114,93%
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ	1600.00	399.00	152,40	38,19%
ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՎՃԱՐ	4500.00	1125.00	1673,20	148,71%
ՀԱՄԱՅՆՔ ԵՆԹ ՄԱՆԿ ԳԱՆՁ ԾՆՈՂ ՎՃԱՐ	1000.00	0.00	0.00	0,00%
ԸՆԴԱՄԵՆԸ	166664,40	66183.2	87472.66	132.00 %

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԵԴԻԳԱՐՈՎԱ

Հավելված 2
ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքի ավագանու
13.05.2021 թ. Թիվ 13-Ա որոշման

2021թ. Առաջին եռամսյակի բյուջեի
Ծախսերի կատարողականը աճողական տեսքով

/Հավելվածում ցուցանիշները ներկայացված են գույքային հարկերի վճարման գանձապետական ծրագրից/

Ծախսատեսակ / Հիմնարկ	Տարվա պլանը (հազ.դրամ)	Ամսվա պլանը (հազ.դրամ)	Փաստացի ծախսը (հազ.դրամ)	Ծախսը պլանի նկատմամբ
Աղբահանություն	1600,00	400,00	361,80	90,45%
Բարձրագույն կրթություն	100,00	100,00	0,00	0.00%
Գույքի նկատմամբ իրավունք	300,00	300,00	0,00	0,00%
Կառավարման մարմնի պահպանում	20792,80	6211,60	4318,00	69,50%
Հանգիստ,մշակույթ,կրոն	5350,00	1850,00	1631,94	88,21%
Հասարակական կազմակերպություն	100,00	50,00	00,00	0,00%
Նախադպրոցական կրթություն	10000,00	1890,00	609,0	32,22%
Ջրային կառույց շահագ. և պահպանում	4500,00	1470,00	1070,11	72,79%
Սոց.պաշտպան .անապահով ընտանիքներին	1700,00	600,00	56,90	9,48%
Վարչ.բյուջեի պահուստային ֆոնդ	11944,90	11944,90	11944,90	00.00%
Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում	1300,00	650,00	259,24	39,88%
Ֆոնդային .բյուջեի պահուստային ֆոնդ	8659,50	8659,50	0,00	0.00%
Ասֆալտ –բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում/սուբվենիցայի այլ ծախսեր/	6968,9	6968,9	0,00	0,00%
Ասֆալտ –բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում/պետության մասնաբաժնի վճարման ծախսային ծրագիր/սուբվենցիա	65902,80	65902,80	65902,80	100,00%
Ասֆալտ –բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում/համայնքի մասնաբաժնի վճարման ծախսային ծրագիր/ սուբվենցիա	33100,00	33100,00	8878,32	26,82%
Ընդհանուր բնույթի այլ ծառայություն	1650,00	900,00	70,00	7,77%
Կանաչ տարածքների հիմնում և պահպանում	55,00	55,00	0,00	0,00%
Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում	1100,00	700,00	0,00	0,00%
Բնական գազ և նավթամթերք	500,00	500,00	00,00	0,00%
Հանգստի և սպորտի գոտու պահպանում	200,00	200,00	0,00	0.00%
ԸՆԴԱՄԵՆԸ ՝	175823,90	142452,70	95103,00	66,76%

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԵԴԻԳԱՐՈՎԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 14-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարչական բյուջեի եկամտային մասը ավելացնել 230.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 61022.7 հազ.դրամ, որից՝

ա/Ընթացիկ տարվա դոտացիայի պլանը ավելացնել 100.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 35784.7 հազ.դրամ,

բ/Տեղական վճարներ՝ համայնքի բնակչությունից ջրամատակարարման ծառայության դիմաց տեղական վճարի տարեկան պլանը ավելացնել 160.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 4660.0 հազ.դրամ,

գ/ Պայմանավորված համայնքում Ա/Ձ Գրետա Եղիյանի 2021 թվականի մարտ ամսից սկսած ձեռնարկատիրական գործունեության դադարեցմամբ, տեղական տուրքի՝ ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվության դիմաց գանձվող տուրքի պլանը պակասեցնել 30.0 հազ.դրամ, ճշտված պլանը 178.0 հազ.դրամ, վարչական բյուջեի եկամտային մասը պակասեցնել 30.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 61022.7 հազ.դրամ,

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ջրային կառույցների շահագործում եվ պահպանում/ բաժին-6, խումբ-6, դաս-1/

Աշխատողների աշխատավարձեր՝ 4111 հոդվածի պլանը մայիս ամսից ավելացնել 160.0 հազ.դրամով, ջրային կառույցների սպասարկման մասնագետ- փականակագործի աշխատավարձի տարեկան ճշտված պլանը սահմանել 1420.0 հազ.դրամ,

Կառավարման մարմնի պահպանում/ բաժին-1, խումբ-1, դաս-1/

Համակարգչային ծառայություններ՝ 4232 հոդվածի պլանը ավելացնել 72,0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 294,2 հազ.դրամ, այն ծախսել համայնքապետարանի ինտերնետային կապի ապահովման և այփի հասցեի ամենամսյա տրամադրման համար,

Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ 4239 հոդվածի զրոյական պլանը ավելացնել 70.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 70.0 հազ.դրամ, այն նպատակաուղղել համայնքապետարանի 2015 թվականի փաստաթղթաշրջանառության արխիվային պահպանման հանձնման համար,

Սանիտարական մաքրում/ Աղբահանություն/- / բաժին-5, խումբ-1, դաս-1/

Տրանսպորտային նյութեր՝աղբահան վարորդին հատկացվող ամենամսյա դիզելային վառելիքի պլանը /երկրորդ եռամսյակի համար նախատեսված/՝ 4264 հոդվածը պակասեցնել 180.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 220.0 հազ.դրամ, այն նպատակաուղղել 4111 հոդվածին՝ աղբահան վարորդի աշխատավարձի բարձրացմանը, ճշտված պլանը սահմանել 1380.0 հազ.դրամ:

Հատկացումը կատարել վարչական բյուջեի պահուստային ֆոնդից, պահուստային ֆոնդի պլանը պակասեցնել 72.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 11872.9 հազ.դրամով,

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը պակասեցնել 7250.0 հազ.դրամով, պահուստային ֆոնդի ճշտված պլանը սահմանել 4622.9 հազ.դրամ, վարչական բյուջեից ֆոնդային բյուջե հատկացման զրոյական պլանը սահմանել 7250.0 հազ.դրամ, հատկացումը վճարման հանձնարարագրով նպատակաուղղել ֆոնդային բյուջեի ներքոհիշյալ ծախսային ծրագրին.

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ասֆալտ-բետոնյա ծածկի նորոգում/ սուբվենցիա/- /բաժին-4, խումբ-5, դաս-1/

Եղեգնավան համայնքի Ֆիդայու, Մ. Մաշտոց, Գ. Նժդեհ, Ազատություն, Ա.Շիրվանզադե, Պ.Սևակ փողոցների ասֆալտապատման և Ա. Խանջյան փողոցի մասնակի ասֆալտապատման աշխատանքների կատարման դիմաց համայնքի կողմից վճարման ենթակա մասնաբաժնի գումարի պլանը՝ 5112 հոդվածի պլանը ավելացնել 7250.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 40250.0 հազ.դրամ,

Կառավարման մարմնի պահպանում/ բաժին-1, խումբ-1, դաս-1/

Վարչական սարքավորումներ՝ 5122 հոդվածի զրոյական պլանը ավելացնել 250.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 250.0 հազ.դրամ, համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ՝ Լ. Կագրամանյանի կարիքների համար /2021 թվականի նոր գույքային բազայի տեղադրմամբ պայմանավորված/ արդիականացված և չափորոշիչներին համապատասխան համակարգչի ձեռքբերման համար:

Հատկացումը կատարել ֆոնդային պահուստային ֆոնդից, այն պակասեցնել 250.0 հազ.դրամով, ճշտված պլանը սահմանել 8409.5 հազ.դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ՋՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 15-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 թ. ԹԻՎ 39-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությունի օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Եղեգնավան համայնքի ավագանու «Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 39-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1/ Եղեգնավան համայնքի սեփականության գույքագրման արդյունքներին ավելացնել 00124 գույքային համարը՝

Արարատի մարզի Եղեգնավան համայնքի Չարենց, Շիրվանզադե և Սևակ, Ազատություն փողոցների նոր կառուցված գազատար	1759534	31	12	0001	1113	1123	711103	Շահագործվող	05.05.21թ

2/ <<Համախառն հաշվեկշռային արժեք>> բաժնում <<146178173.50>> թիվը փոխարինել <<147937708.00>> թվով,

3/ <<Հաշվեկշռային արժեք>> բաժնում՝ <141790854,92>> թիվը փոխարինել <<143550389.00>> թվով:

Կողմ -6 Դեմ -0 Չեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ԶՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 16

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 37 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հեքիաթ ՀՈԱԿ մանկապարտեզի 2021 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 37 որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

2-րդ կետի 2-րդ տողի << 93.000>> թիվը փոխարինել <<93.500>> թվով, 6-րդ տողի <<93.000>> թիվը փոխարինել <<93.500>> թվով, 10-րդ տողի <<90.000>> թիվը փոխարինել <<96.000>> թվով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ՋՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 17

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 36 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի <<Համայնքապետարանի 2021 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 36 որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

բ/ կետի 6-րդ տողի << 115.000>> թիվը փոխարինել <<125.000>> թվով,

Համայնքային կառույցների սպասարկման աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերի՝

բ/ կետի 1-ի և տողի <<105.000>> թիվը փոխարինել <<125.000>> թվով, 2-րդ տողի << 100.000>> թիվը փոխարինել և 3-րդ եռամյակից հաշվարկել << 130.000>> թվով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ԶՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Եղեգնավան, 093551057, yeghegnavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 18

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 Թ. ԹԻՎ 29-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ և 37-րդ հոդվածներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ.

Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 11-ի <<Հողի հարկից ազատելու մասին>> թիվ 29-Ա որոշման 2-րդ կետը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԴԵԼԱ

ԱՄԻՐՅԱՆ ՋՈՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԻՎԱՆ

ԿԱԳՐԱՄԱՆՅԱՆ ԺԱՆՆԱ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՍԵՓ ՂԱԶԱՐՅԱՆ